Բնականաբար, տեսնում ենք նաեւ նոր մարտահրաւէրների դիմակալման, համաշխարհային խնդիրների լուծման փորձեր, որոնք յաճախ լինում են անարդիւնաւէտ, քանի որ դրանց լուծման մեթոդները այլեւս չեն համապատասխանում համամարդկային էթիկայի չափանիշներին, այսինքն՝ դրանք դուրս չեն գալիս եսապաշտական (քաղաքակրթական, մշակութային, պետական), հատուածական, „ազգային շահի" շրջանակներից: Գուցէ ոմանք իբրեւ արդարացում բերեն էթիկական յարաբերապաշտների այն փաստարկը, թէ *ունիվերսալ* բարոյականութիւն չկայ եւ չի կարող լինել, որովհետեւ իւրաքանչիւր քաղաքակրթութիւն, մշակոյթ, պետութիւն ու հասարակութիւն ունի բարու եւ չարի, արդարի ու անարդարի ի՛ր պատկերացումը: Հետեւաբար չկան եւ չեն կարող լինել մարդկանց արարքների գնահատման միասնական բարոյական չափանիշներ: Անշուշտ, դա արդարացում չի կարող լինել. համաշխարհայնացումը պարտադիր ենթադրում է *գլոբալ* բարոյագիտական չափանիշների ու համամարդկային սկզբունքների մշակում և կիրառում: Եթէ դա դեռ չի արուել, նշանակում է մնացել ենք հին կարծրատիպերի գերութեան մէջ:

Միւս զգացումը, որ ապրում եմ, լաւատեսական բնոյթ ունի: «Ամէն ինչ դեռ կորած չէ», մարդկութիւնը իր մեղքերը քաւելու, սխալները շտկելու, իր արարքների, մարդու, բնութեան, տիեզերքի ներդաշնակութեան ու ամբողջութեան համար պատասխանատուութիւն ստանձնելու ժամանակ դեռ ունի, հետեւաբար, բարոյականութեան մասին գիտելիքը, մատուցման տարբեր ձեւերով, հրատապ ու արդիական է: Այնպէս որ, սոկրատէսեան *«գիտելիքը առաքինություն է»* վաղուց քննադատուած դրոյթը պահպանել է իր դրական նշանակութիւնը: Ամենայն դէպս, առաքինութիւնը, բարոյական ճիշտ վարքը, բարոյական օրէնքին համապատասխանող արարքը առանց գիտելիքի հնարաւոր չէ պատկերացնել: Իմաստունները եւ իմաստասէրները, կրօնքի հիմնադիրները իրենց ուսմունքներով ձգտում են օգնել մարդկանց, փորձում նրանց սրտերում ցանել պատասխանատուութեան սերմեր՝ միասնաբար լուծելու մարդկութեան գոյութեանը սպառնացող *գլոբալ* խնդիրները: Բարոյական լինել, նշանակում է պատասխանատու լինել: 20-րդ դարի նշանաւոր հումանիստ, բժիշկ, մշակութաբան ու բարոյագէտ Ա. Շվեյցէրը (Albert Schweitzer, 1875 – 1965 թ.) բարոյագիտութիւնը սահմանում է որպէս անսահման պատասխանատուութիւն, ոչ միայն մարդկային, այլ՝ առհասարակ կեանքի բոլոր ձեւերի հանդէպ: Նրա *«ակնածանք կեանքի հանդէպ»* մօտեցումը կոչուած է փոխելու մարդկանց վերաբերմունքը կենդանի էակների նկատմամբ, աւելի բարոյականացնելու մարդկանց գործելակերպը:

Այս տեսանկիւնից մի քանի առումներով գնահատելի է բժիշկ Սարգիս ՔԷհեաեանի խիզախ (նկատենք, որ հայերէն լեզուով բարոյագիտական ձեռնարկներ մատների վրայ կարելի է հաշուել) փորձը՝ փիլիսոփայական ակնարկներով համառօտ ներկայացնել բարոյագիտական մտքի համապատկերը: Այստեղ պէտք է շեշտել, որ հեղինակը, իր առաջին մասնագիտութեամբ իմաստասէր-բարոյագէտ մը չէ, այլ՝ մասնագէտ բժիշկ մը, Գերմանիայում: